

ուայել Աստուծոյ մինչեւ ի մահ, թէ աշխարհս ¹³⁵
 մտանէք եւ ամուսնանայք: Իսկ որք լցեալ են
 սուրբ հոգով՝ ասեն. Սուրբ մայր եւ հոգեւոր
 ծնող մեր, ոչ կամիմք ելանել աստի ի սուտ
 եւ յանցաւոր յախտալի աշխարհս: Ասէ մայր.
 Տեսէք եւ զզոյշ լերուք, զի Աստուծոյ ծա- ¹⁴⁰
 ոայելն դժուարին է որպէս եւ տեսանէքդ:
 Եւ նորա ասեն. Մեք կամաւ եւ յօժարու-
 թեամբ յանձն առնումք զամենայն նեղու-
 թիւնս եւ զչարչարանս յուսալով յողորմու-
 թիւնն Աստուծոյ եւ ի ձեր սուրբ աղօթքն թէ ¹⁴⁵
 զմեզ անարժանս ընդունիցիք ի սուրբ վանս
 ձեր: Եւ մայրն տեսեալ զջերմեռանդ սէրն եւ
 զյօժարութիւնն կամաց եւ զփափագ սրտից
 նոցա, յետ բազում խրատից եւ վարդապե-
 տութեան կարէ զմօզն եւ զգեցուցանէ սքեմ: ¹⁵⁰
 Թէ էգ է, մնայ առ նոսա մինչեւ ի մահ ծա-
 ոայելով Աստուծոյ. իսկ դարուան առաքեն
 հարեղայից վանս. երթեալ անդ եւ անչափ
 ճգնին եւ կրթին ի վարս եւ ի կրօնս մինչեւ
 լինին հարեղայ առաքինի: Եւ որք ոչ կամին ¹⁵⁵
 մնալ ի վանսն՝ ասեն թէ Սուրբ մայր, մեք
 ոչ կարեմք ժուժել վանացս. տուք մեզ հրա-
 ման ելանել աստի: Իսկ նորա տրօք եւ պար-
 դեօք հանեն ի դուրս եւ ամուսնացուցանեն
 կամ յայլ արվեստս տան: Եւ այսպիսի բարի ¹⁶⁰
 եւ շահաւէտ խրատովն ապրեցուցանեն զբա-
 զում հոգիս անմեղ տղայոցն. եւ լինին պատ-

139 յաղթալի: — 141 դժուարին: